2.

Այն հանգամանքը, որ բուն առումով ***վարքերը*** բացակայում են Առաքել Դավրիժեցու պատմագրքում և, ընդհանրապես, ուշ միջնադարում, Քնարիկ Տեր-Դավթյանը բացատրում է նրանով, որ «XVI–XVII դդ. վարքագրության մեջ... փոխվում է նաև ***վարք*** բառի, որպես սրբի ամբողջական կենսագրության իմաստը: Այն ստանում է ավելի նեղ նշանակություն և սկսում է վերաբերել միայն կենցաղավարությանը» (ընդգծումը բնագրում–Ա.Ն.)[34] :

Դավրիժեցու պատմագրքում վարքերը ևս հիմնականում դրսևորվել են առանձին գլուխների տեսքով, թեպետ կարճառոտ կամ հակիրճ վարքեր նույնպես հանդիպում են՝ հատկապես զրույցներում ու վկայաբանություններում: Դրանք ընդգրկում են մասնավոր ու ընդհանրական բնույթի կենսագրական տվյալներ:

«Գիրք պատմութեանց»-ում վարքեր են «Պատմութիւն առաքինագործ արանց Սարգիս եպիսկոպոսին և տէր Կիրակոսին, որք եղեն սկիզբն շինելոյ և հաստատելոյ անապատաց: Որովք և պատճառք ամենայն բարեկարգութեան վանօրէից և եկեղեցեաց և նոցին բնակողաց» վերնագրով ԻԱ, «Պատմութիւն վարդապետութեան և վարուց սրբոյ վարդապետին Պօղոսի» վերնագրով ԻԳ, «Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան տեառն Մովսիսի: Ընդ որում և յաղագս նորոգութեան լուսակառոյց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» վերնագրով ԻԴ, «Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի: Յորում և վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և յայտնելոյ նշխարաց նոցին» վերնագրով ԻԵ գլուխները: Այս

---

[34] ***Քնարիկ Տեր-Դավթյան,*** Վկայաբանություն և վարք, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 86: